ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԵՐԹ

ԹՌՉՔ

№ 7

ՀՈՒԼԻՍ
2011 Թ.

(Բուն Հայոց 4503 թ.)

Լույս է տեսնում
2009թ.
Հոկտեմբերից

Համախմբվենք յուրաքանչյուրիս և ընդհանուր խնդիրների շուրջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ամեն աստծո առավոտ արթնանում ենք նոր ձեռքբերումների ու հաղթանակների հույսով... Իսկ այդ հաղթանակները կռում է ժողովուրդը, որը զանգվածաբար հեռանում է մեր հայրենի բնօրրանից...

Հայը դարեր շարունակ պանդուխտ է եղել...

Շատ ենք անդրադառնում այս մտքին: Բայց, ցավոք, վերոհիշյալ բառերն ավելի հաճախ արտասանում ենք այդ մտքի հետ համակերպվածի հոգեբանությամբ: Երբեմն էլ Հայաստանից մեր մեկնելն արդարացնում ենք այն պատմական անարդարությամբ, որ հայը երբեք պանդխտության ցուպը այդպես էլ վայր չդրեց. ասել կուզի՝ ճակատագիր է: Եվ այս ամենի պսակն է կազմում ինձ համար անտանելի մի կարգախոս. «Որտեղ հաց, էնտեղ կաց»:

Ու տասնամյակներով, դարերով տանուլ ենք տալիս մեր ազգային, հոգևոր, մշակութային արժեքները՝ անվերջ լուծելով այդ չարաբաստիկ «հացի խնդիրը»:

Մեկնողների մեծ մասը պատճառաբանում է, թե մեր երկիրն այն չէ ու Հայաստանն իր զավակների համար չի ապահովում զարգացման դաշտ: Դե, զավակներն էլ ստիպված, այլընտրանք չունենալով, օտար ափերում են բախտ որոնում:

Ըստ իս, դա այնքան էլ այդպես չէ... Ավելի շատ ոչ թե երկիրն այն չէ, դրա համար են մեկնում, այլ զավակներն անտեր են թողնում ու հեռանում, դրա համար էլ երկիրն այն չէ:

Լավ, հասկացանք, երկար դարեր թշնամիներն ավիրել են մեր երկիրը, ասպատակել, ճնշել, գերեվարել... Պետություն չենք ունեցել ու պետականություն: Ցեխ ենք շպրտում կոմունիստների ուղղությամբ՝ գրեթե ուրանալով խորհրդային տարիների ձեռքբերումները... Ենթադրենք՝ ճիշտ ենք վարվում՝ մեղադրելով ու մերժելով այդ տարիները: Բայց չէ՞ որ արդեն երկու տասնամյակ է կերտում ենք մեր անկախ պետականությունը և ունենք **ժողովրդի ծոցից ծնված իշխանություն**...

Մինչդեռ մեր բարեկամ, ու ոչ այնքան, երկրները բացահայտ ագահությամբ կլանելով լավագույն հայորդիներին՝ շենացնում են իրենց երկրները ու «մեծահոգաբար թույլ են տալիս» որ նրանց ստեղծածի փշրանքներից հասնի Հայաստան՝ չմոռանալով նույն մեծահոգությամբ հայտարարել, թե իրենք են պահում մեր հնամենի երկիրը, այդ նույն պահին Երկրիս պետական այրերն այստեղից մեկնելու ճանապարհներն են հեշտացնում, ենթադրաբար ուրախանալով, որ էս մի քանի հազարի լացից էլ կպրծնեն, որ վերջիններս էլ պահանջներ չեն ներկայացնի...

Ստացվում է պարադոքս. պետականություն չունեինք՝ Հայաստանը հայաթափվում էր, ունենք, դարձյալ հայաթափվում է... Բա, տարբերությունն ինչու՞մն է... Որտե՞ղ է վերջապես այս հարցի լուծումը, որն ուժերի հարաբերակցությունը կփոխի մեր լինելիության կողմը... Ե՞րբ ենք ունենալու մեր ամենաարժեքավոր պոտենցիալին տեր կանգնելու ազգային հայեցակարգ:

Մեր գաղթական պապերը մեռան հայացքները դեպի ԷՐԳԻՐ, հնար չկար հետ գնալու՝ թուրքն էր ճանապարհին: Այսօր ի՞նչն է ճանապարհին, որ ընտանիքներով գաղթում ենք ու գաղթում...

Վերջին ժամանակներս, ընդհուպ մինչև ամենաբարձր մակարդակով, հաճախ են անդրադառնում սույն խնդրին: Ըստ իս, վիճակը բավականին լուրջ է, չնայած հավաստիացումներին, թե իբր, ճիշտ է, կա այդպիսի խնդիր, բայց ոչ այն մակարդակի, որ դառնա ազգային անվտանգության հարց:

Զարմանում եմ, Հայաստանի Հանրապետությունն իր մարդկային ռեսուրսներից առավել գնահատելի ի՞նչ ունի, որ դրա վրա սևեռված չի նկատում, թե ինչպիսի սարսափելի արագությամբ են արտահոսում իր կադրերը: Հետո էլ ասում են, թե մտածում են հայերի ու Հայաստանի մասին. կասկածում եմ... Ասում են ասելու համար, այնպես, ինչպես զբոսաշրջությունը հայտարարում են տնտեսության գերակա ճյուղ, բայց գնալով երկիրս ավելի ու ավելի է խճճվում համատարած աղբի մեջ...

Մեր հաղթանակները ցույց են տալիս, որ կարողանում ենք հաղթել ու հաղթահարել անհաղթահարելին, ցավոք միայն երբ դանակը հասնում է ոսկորին...

ՄԵՐ ՄԱՍԻՆ

Հարափոփոխ աշխարհում ամեն ինչ փոփոխական է ու հարաբերական, բացի մի քանի բացարձակ արժեքներից, ինչպես օրինակ՝ սերը: Ասվածին համահունչ ու ներդաշնակ է ապրում և գործում «Թռիչք» հկ-ն, որի կազմը թեև անընդհատ թարմացվում է, փոփոխություններ կրում, միևնույնն է կազմակերպությունը մնում է իր բռնած ուղուն հավատարիմ՝ այն է. լավագույն լուծումներին ձգտել կրթությամբ զարգացման ու յուրաքանչյուր բնագավառում մշակույթի ձևավորման ճանապարհով: Իր առջև դրված խնդիրները լուծելու համար «Թռիչքը» տարբեր տարիքային խմբերում իրականացնում է բազմապրոֆիլ աշխատանքներ: Ներկայումս գործում են.

♦ «Կրտսեր հայորդաց» խմբակը (ղեկավար՝ Քրիստինա Հակոբյան), որում ընդգրկված են 10-12 տարեկան երեխաներ: Այստեղ երեխաների հետ տարվում են քաղաքացիական և հայրենասիրական կրթադաստիարակչական աշխատանքներ: Բարձրացվում են նրանց իմացական և օգտակար ակտիվության մակարդակները:

♦ «Պատանի լրագրող» խմբակը (ղեկավար՝ Հերմինե Օհանյան)՝ 13-15 տարեկան պատանիների ու աղջիկների մասնակցությամբ, ովքեր սովորելով լրագրության հիմունքները, գործնական քայլեր են իրականացնում՝ փորձելով դառնալ մեր հասարակության վաղվա անաչառ տեղեկատու-լրագրողը:

♦ Երիտասարդական թևը (ղեկավար՝ Սվետլանա Արզումանյան), որի անդամներն են 16 և ավելի տարիք ունեցող թռիչքականները:

Գրական երեկո ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքում

Վերջիններս աշխատում են ինքնակրթության ու փորձի փոխանակման ճանապարհով բարձրանալ իրենք իրենց նկատմամբ ու ակտիվ մասնակիցը դառնալով հասարակական զարգացումների, նպաստ բերել հարազատ երկրի բարգավաճմանը:

♦ Ս/թ. հուլիսի 20-ից գործում է «Պատանի բնասեր» խմբակը (ղեկավար՝ Տաթև Ղուկասյան), որին կարող են մասնակցել 11-15 տարեկան դպրոցականները: Խմբակի երեխաները կստանան համապատասխան գիտելիքներ, կդառնան բնապահպանական մշակույթի կրող ու տարածող: Այստեղ կիրականացվեն նաև գործնական աշխատանքներ ու տարաբնույթ ակցիաներ:

Կազմակերպությունն ապրում է իրեն հատուկ արագ ռիթմով՝ ակտիվ մասնակցելով համայնքի կյանքին՝ նախաձեռնելով և միանալով այլոց նախաձեռնություններին: Մեր ավանդույթներին հարազատ մնալով այս տարի ևս նշեցինք բոլոր պետական, եկեղեցական տոները և հիշատակման օրերը: Օրինակ բավականին ծավալուն ծրագրով մասնակցեցինք «Թանգարանային գիշերվա» և «Թանգարանների միջազգային օրվա» միջոցառումներին: Հատկանշական է, որ մայիսի 9-ին հուշարձան այցելելուց հետո իրականացրեցինք ևս մեկ ավանդույթի ուժ ստացած ակցիա՝ գարնանային ծառատունկ (այս անգամ թիվ 24 դպրոցի բակում): Խորին երախտագիտությամբ տեղեկացնենք, որ շիվերը անվճար տրամադրել էին Գուգարքի անտառտնտեսությունը և «Բնապահպանություն» ՀԿ-ն, որն, ի դեպ, փնտրում է հովանավորներ:

Այս տարի մեր մշտական գործընկերների շարքերը համալրեցին ՀԳՄ Լոռու մասնաճյուղն ու «Լոռի-Փամբակ»-ի երկրագիտական թանգարանը, որոնց հետ արդեն հասցրել ենք մի քանի անգամ համատեղ միջոցառումներ իրականացնել:

Տեղին է անդրադառնալ նաև հուլիսի 10-ին դեպի Բոլոր Քար կատարած քայլարշավին: Այդ օրը արշավի մասնակիցների համար բովանդակալից էր՝ օգտակար ու հաճելի: Կազմակերպվեցին դասախոսություններ, խաղեր, գեղարվեստական համարներ:

Առաջիկա ծրագրերից է հուլիսի վերջին իրականացվելիք ուխտագնացությունը դեպի Սանահին և Հաղբատ վանքեր և այդ այցելության շրջանակներում վարդավառի տոնի նշումը Դսեվանքում:

Կյանքը շարունակվում է և շարունակվում է «Թռիչքի» ճախրանքը...

Ծառատունկ թիվ 24 դպրոցի բակում, 9 մայիսի 2011 թ.

ԹՌԻՉՔ
ՀՈՒԼԻՍ, 2011 Թ.
2-ՐԴ ԷՋ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹՌԻՉՔ

ԴԵՊԻ ՈՒ՞Ր

Վանաձորցի նկարիչ Ռուբեն Սուվարու արվեստանոցում էինք.... Ակամայից սկսեցի ուսումնասիրել նկարչի գործերից մեկը, որը վերնագրված էր «Դեպի ու՞ր»: Գրաֆիկական աշխատանք էր, որում ամփոփված է քաղաք մի տաշտի մեջ: Ինձ առանձնակի հետաքրքրեց նկարի վերնագիրը և նկարիչ ընկերոջս խնդրեցի մեկնաբանել այդ գործը: Սուվարին մեկնաբանելու փոխարեն պատասխանեց. - «Միգրացիան մեր աչքերով» նկարների ցուցահանդես-մրցույթին, որը կազմակերպել էր "People in need" հայաստանյան մասնաճյուղը՝ ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի հետ համատեղ, ներկայացրել էի երեք աշխատանք, որտեղ երեքն էլ արժանացան առաջին մրցանակի:

Նկարում՝ ձախից. Հրայր Հակոբյան, Ռուբեն Սուվարի, Իվան Անտոնյան

Անձամբ ինձ շատ է հետաքրքրում Սուվարի նկարչի արվեստը: Նա երբեմն ծառ է նկարում, երբեմն ծաղկեփունջ, պարտեզ, այգի... Մտահորիզոնը բազմաշավիղ է: Երիտասարդ արվեստագետի վրձներգերում մերթընդմերթ գիծը դառնում է պատկեր՝ արտահայտելով հայի կենցաղը, մշակույթը, եկեղեցին: Նրա գործերում ամփոփվում է հայ ժողովրդի կարոտը, տարիների կուտակված մաքառումը: Նկարչի գրչերգերը մտովի անդրադարձ են հայոց բազմադարյա պատմությանը: Հաճախ տառեր է նվագում Սուվարին իր պատկերներում, միևնույն ժամանակ կենտրոնում գամելով Քրիստոնեության խորհրդանիշ ԽԱՉԸ: Կտավներից բխում է հայ ժողովրդի լինելիությունը ու ավելի է հասկացվում, որ մենք՝ հայերս, ավելի խորարմատ ենք, քան պատկերացնում ենք: Հետաքրքիր են նրա մանրապատկեր-աշխատանքները, որ դառնալով միամբողջ հայաշունչ սիմֆոնիա՝ հարիր հայկական մանրանկարչության ոգուն: Նկարչի գործերում համազարկ են և՛ բնության տեսարանները, և՛ կենցաղային երևույթները: Նա իրեն հատուկ նկարչական շնորհով, անբասիր աշխատանքով մտքին մարմին է տալիս հյուսելով թումանյանական Լոռու ձորը հովվի սրինգի ձայնին: Սուվարու ստեղծագործական որոնումները ամբողջանում են՝ հիշեցնելով հայ մարդու խիղճն ու աղոթքը:

Պայծառահիշատակ գեղանկարիչ Հակոբ Սուվալյանի թոռը լինելով և թրծվելով լոռեցի մեծ գեղանկարիչ Խաչիկ Ղարաբեկյանի արվեստանոցում, Սուվարին շարունակում է բազմավաստակ պապիկի թողած ավանդները: Ինչպես ինքն է նշում, իր գործերում Աստծո խորհուրդն է առաջին հերթին: Հիրավի, վերջին գործերում, որ նկարիչն իր համեստությամբ խորագրել է «Աստծուն որոնելիս», մի ամբողջ երկրային ու երկնային երևույթների մշտամնա կապ է՝ հյուսված Մշո երգերով և մինասյան խղճով: Սուվարու համար նկարչությունը տարերք է և ապրելակերպ: Նկարում է վանք, այդ վանքի հետ ինքն էլ վանք է դառնում ջերմեռանդ հավատավոր՝ հայացքն առ Աստված: Նա լոկ կամակատարն է երկնային ուժի ու մտքի: Նայում ես կտավներին և ակամայից մտովի տեղափոխվում մեկ բնության մեջ, մեկ էլ քեզ զգում ես այնտեղ, որտեղ բացվում և ընդհանրանում է արվեստի գեղգեղուն հորիզոնը՝ ցանկանալով ընդմիշտ մնալ արվեստառատ սուվարիական աշխարհում:

Հավելենք, որ Սուվարին բազմաթիվ ցուցահանդեսներով ներկայացել է արվեստասեր հասարակությանը և՛ Լոռում, և՛ մայրաքաղաք Երևանում, և՛ Գյումրիում: Հեղինակ է գրող, հրապարակախոս Գագիկ Աթաբեկյանի «Ուսուցչանոց» գրքի նկարչական ձևավորման: Նկարչի աշխատանքներին անդրադարձել են և՛ տեղական, և՛ հանրապետական մամուլում: Բավականին տպավորիչ են նրա մասին բանաստեղծ Հրայր Հակոբյանի «Մաշտոց» հանդեսում տպագրված վերլուծականները:

«Մաշտոց» հանդեսի գեղարվեստական խմբագիր, դերասան, «Թռիչք» ՀԿ-ի անդամ՝
Իվան Անտոնյան

Շատերս ենք լսել, նաև կրկնել. «21-րդ դարը զարգացած տեխնիկայի դարաշրջան է»: Ասում ու մատնանշում ենք այն ձեռքբերումները, որոնք ի հայտ են եկել տվյալ ժամանակաշրջանում ...

Բայց եթե մի պահ գանք իրական աշխարհ, նայենք մեր շուրջբոլորը, ապա կհասկանանք, որ, իրոք, կտրվել ենք մեզ շրջապատող իրականությունից ու ցանկալին ընդունում ենք իրականության տեղ...

Ինչպե՞ս կարող են զարգացած տեխնիկայի դարաշրջանում ապրող մարդիկ դույլերով ջուր կրել ամենատարրական հոգսերը հոգալու համար: Ընդ որում, այդ աղբյուրը, որտեղից կրվում է ջուրը մեծի թե փոքրի կողմից, հիմնականում ձմռան ցուրտ օրերին, չմշակված, չհետազոտված, խմելի լինելու հարցում խիստ կասկածելի է, որը շատ է մտահոգում նաև բնակիչներին: Այն հոսում է հողի տակից, նրանից օգտվում են և մարդիկ, և ... կենդանիները...

Երևի թե շատերի համար զավեշտական կամ մտացածին կարող է թվալ, սակայն դա ցավալի իրականություն է, որի ականատեսն ու մասնակիցն են դառնում ամեն օր բազմաթիվ մարդիկ:

Ջրամատակարարման հարցով զբաղվող այրերն ու պատասխանատուները, վստահ եմ, անգամ որպեսներ չէին հանդուրժի նման իրավիճակում իրենց հայտնվելը: Մինչդեռ շատ հանգիստ, լռությամբ ու արդեն բնավորություն դարձրած անտարբերությամբ վթարը գրանցում են անլուծելի խնդիրների ցուցակում... և իրավիճակը շարունակում է սպառնալ այս կամ այն թաղամասին ու նրա բնակիչներին...

Լիլիթ Համբարձումյան

Աշակերտի հանդեպ բռնությունը դպրոցում

Այս խնդիրը տարածված է ամբողջ աշխարհում: Իմ հասակակիցները նույնպես գտնում են, որ սա լուրջ խնդիր է, և անհրաժեշտ է գտնել լուծման արդյունավետ տարբերակներ: Խնդիրը վեր հանելու համար իրականացվում են բազմաթիվ հետազոտություններ, վերլուծություններ, կազմակերպվում տարաբնույթ ակցիաներ այդ թվում նաև բողոքի: Չնայած դրան, այն իր վերջնական լուծումը չի գտել:

Այս թեմայի շուրջ մենք զրուցեցինք Վանաձորի թիվ 6 դպրոցի մաթմատիկայի ուսուցչուհի Արմենուհի Ղումաշյանի հետ:

1. Ինչպե՞ս եք վերաբերվում դպրոցում ուսուցչի կողմից աշակերտի հանդեպ բռնությանը, և ի՞նչ եք հասկանում բռնություն ասելով:

- Խիստ բացասաբար: Բռնություն ասելով հասկանում եմ բռնանալ երեխայի կամքին կամ գործադրել ֆիզիկական բռնություն, որն իմ աշխատանքային պրակտիկայում բացառված է:

2. Դասի ընթացքում ի՞նչ պատժամիջոց եք կիրառում անկարգապահ աշակերտի հանդեպ, և արդյո՞ք կիրառում եք:

- Խիստ հանդիմանում եմ: Որոշ դեպքերում հանձնարարում եմ տրված հանձնարարությունը նորից կատարել տանը և հետևողականորեն ստուգում եմ: Հասնում եմ նրան, որ աշակերտն զգա իր սխալը:

3. Ծեծը դասապրոցեսի ընթացքում, որպես դաստիարակության մեթոդ, ընդունո՞ւմ եք:

- Ո՛չ, բացառված է:

4. Ձեր պրակտիկայի ընթացքում հանդիպել եք աշակերտի կամքի վրա բռնանալու դեպքի:

- Երբեմն պատահում են միջադեպեր, բայց ոչ լուրջ:

Անդրանիկ Օհանյան

Աղբը գրավում է քաղաքը: Խաղահրապարա՞կ, թե՞ աղբանոց:

Վանաձորի Տիգրան Մեծ փողոցի 24 շենքի բակում գեղեցիկ խաղահրապարակ կար, որը ներկայումս ավելի շատ աղբանոց է հիշեցնում: Մի քանի տարի առաջ այդ բակում, որտեղ ապրում եմ նաև ես, շատ երեխաներ կային, և մենք ուրախ խաղում էինք մեր մաքուր խաղահրապարակում: Հիմա բակում երեխա չի մնացել, նորեկ բնակիչներն էլ «ալարում են» են գնալ և աղբը նետել դիմացի մայթին տեղադրված աղբամանի մեջ, փոխարենը նետում են խաղահրապարակի տարածք: Այս ամենը տեղի է ունենում Սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնի «քթի տակ»: Էլ ուրիշ ի՞նչ ասես...

Շենքի բնակիչները մեզ դժգոհեցին, որ ոչ ոք չի հետևում աղբահանությանը: Երեխաներն անկեղծացան. «Մենք շենքի բակում ենք խաղում և անգամ ապակիներ ենք ջարդում՝ ոչ դիտմամբ. և ո՛չ մի արդյունք»: Վանաձորի քաղաքապետարան այցի ժամանակ քաղաքապետի՝ լրատվության գծով խորհրդական Խորեն Գասպարյանի հետ հանդիպմանը զրուցեցինք թեմայի շուրջ: Նրան ներկայացրեցինք մեզ հուզող հարցերը՝ կապված որոշ բակերում խաղահրապարկների բացակայության հետ, ինչպես նաև մեր նշած շենքի բակի խաղահրապարակի աղտոտված վիճակի վերաբերյալ: Պարոն Գասպարյանը մեզ հայտնեց, որ աղբահանման խնդիրներով զբաղվում է Կոմունալ տնտեսությունների և բարեկարգման բաժինը, ուր և անհրաժեշտ է դիմել՝ խնդիրը վերացնելու համար: Ինչ վերաբերում է նոր խաղահրապարակ կառուցելու հարցին, ապա ըստ կոնոնակարգի մենք պետք է Վանաձորի քաղաքապետի անունով դիմում ներկայացնենք Վանաձորի քաղաքապետարանի ընդհանուր բաժին և տասը օրվա ընթացքում պատասխանի սպասենք, այնուհետ գրանցվենք Քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնում, և սպասենք քաղաքապետի՝ քաղաքացիների ընդունելության, որպեսզի անձամբ զրուցենք մեզ անհանգստացնող խնդրի շուրջ:

«Թռիչք» ՀԿ «Պատանի լրագրող» խմբակի անդամներով որոշեցինք շարժվել հենց այդ ուղղությամբ՝ մեր տարիքակիցների խնդիրները բարձրաձայնելու նպատակով: Այս նախաձեռնությանը միանալու ցանկություն հայտնեցին նաև Նարեկացի 6 փակուղու հասցեում բնակվող պատանիները: Նրանց ևս անհանգստացնում է բակում խաղահրապարակի բացակայությունը:

Մենք՝ «Թռիչք»-ականներս, մեր հերթին որոշել ենք հետամուտ լինել խնդրի լուծմանը:

Արման Եղիազարյան

Դեռահասները կանգնած են երկընտրանքի առջև՝ կրթությո՞ւն, թե՞ համացանց

Այս հոդվածով ցանկանում եմ անդրադառնալ այն հարցին, թե 21-րդ դարում դեռահասներն ինչպես են անցկացնում իրենց ազատ ժամանակը, և ինչպես են սովորում: Մեր օրերում շատերն են տնային պայմաններում օգտվում համացանցից: Դեռահասների համար համացանցը կարծես հիվանդություն է դարձել: Նրանք ամբողջ օրը կարող են նստել համակարգչի առջև, մոռանալ դասերի մասին, իսկ դպրոցում պայուսակից հանել բջջայինները և նորից համացանց... Այդ ցավը, որ կարծես կուրացրել է, կտրել աշխարհի հաճույքներից, նրանց համար ամեն ինչ է՝ և՛ հաճույք, և՛ ժամանց:

Թեմայի շուրջ զրուցեցինք Վանաձորի թիվ 19 դպրոցի 10 «ա» դասարանի աշակերտների հետ: Այդ դասարանում սովորում է 14-16 տարեկան 23 աշակերտ, որոնց 65%-ը գտնում է, որ համացանցը իրենց համար ժամանց է, որի ընթացքում կարող են ծանոթանալ, զրուցել և խաղեր խաղալ, իսկ մնացած 35%-ը պատասխանեց, որ համացանցը իրենց համար ինֆորմացիայի աղբյուր է:

10 «ա» դասարանի աշակերտ Արամ Պողոսյանը 15 տարեկան է, և այնքան էլ լավ չի սովորում: Ազատ ժամանակը վատնում է սոցիալական ցանցերում: Համացանցը նրա համար ժամանց է, որով կարողանում է փոքր-ինչ հանգստանալ: Նա հիմնականում այցելում է «Համադասարանցիներ»՝ «Odnoklassniki.ru» կայքը: Համացանցին տրամադրում է 2-3 ժամ, իսկ դասերին 20-30 րոպե: Խնդիրը միայն համացանցը չէ, նրանց ուշադրության կենտրոնում են գտնվում նաև բջջային հեռախոսները: Դպրոցում «զբաղմունք չունեն», նրանց մնում է միայն մի բան՝ բջջային հեռախոսով միանալ դարձյալ համացանցին: Ասես դպրոց են գալիս կյանքի հաճույքներ վայելելու համար՝ չնայած չգիտեմ, թե կարելի է արդյոք համացանցը կյանքի հաճույք անվանել: Դասերի ժամանակ ոչինչ չեն անում, իսկ ի՞նչ պետք է դառնան ապագայում «համացանցի գերի՞»... Բայց չէ՞ որ մեզ խելացի և առողջ քաղաքացիներ են պետք:

Աշակերտների այս լուրջ հիմնախնդրի շուրջ զրուցեցինք թիվ 19 դպրոցի ուսուցչուհիներ Նարինե Հարությունյանի և Աննա Ոսկանյանի հետ: Նարինե Հարությունյանը՝ 10 «ա» դասարանի դասղեկը, իր կողմն է ձգում աշակերտներին: Նրա կարծիքով աշակերտը 1-2 ժամ և ավելի պետք է տրամադրի դասերին: Անգլերենի ուսուցչուհի Աննա Ոսկանյանն էլ նշեց, որ անգլերենը շատ կարևոր և պահանջված լեզու է այդ նույն համացանցում, բայց դեռահասները այս պարագայում դարձյալ ո՛չ անգլերեն գիտեն, ո՛չ էլ ուզում են իմանալ:

Ճիշտ ճանապարհի բերենք մեր երիտասարդներին և հիշեցնենք նրանց, որ համացանցից դուրս ևս կյանք կա:

Ռոզա Մարուքյան

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԹՌԻՉՔ

Պատանի լրագրողների այցը Վանաձորի պետական բժշկական քոլեջ (ՎՊԲՔ)

«Թռիչք» կրթամշակութային և խորհրդատվական ՀԿ «Պատանի լրագրող» խմբակը այցելեց Վանաձորի պետական բժշկական քոլեջ: Քոլեջի՝ ընդունելության հանձնաժողովի պատասխանատու Զաիրա Հարությունյանը խմբակի անդամների համար էսկուրս կազմակերպեց քոլեջում՝ ծանոթացնելով գործող բաժիններին, նորակառույց ուսումնական մասնաշենքում գործող համաբուժարանին, բուժական կոսմետոլոգիայի դասասենյակին: Բուժական կոսմետոլոգիա 2-րդ կուրսի ուսանողուհի Աննա Դավթյանը նշեց.«Սովորում ենք կնոջ առողջությանը և գեղեցկությանը անհրաժեշտ մասնագիտություններ»: Այնուհետ պատանիները այցելեցին քոլեջի դեղատուն, ուր ծանոթացան դեղագիտության բաժնի ուսանողների աշխատանքներին: Այնուհետ ծանոթացան քոլեջի ուսումնական գծով փոխտնօրեն Ռիմա Թումանյանի հետ, ով ծանոթացրեց քոլեջի ընդունելության պայմաններին.«Ընդունելությունը

Հարցազրույց Վանաձորի պետական բժշկական քոլեջում

կընթանա հունիսի 11-ից օգոստոսի 25-ը՝ 2 հոսքով՝ հիմնական և լրիվ կրթության բազաների հիման վրա: 9-ամյա կրթությամբ ընդունվողները առաջին կուրսում կստանան ավագ դպրոցի կրթական ծրագրին համապատասխան կրթություն մեկ ուսումնական տարում: Հաջորդ կուրսերում կստանան նեղ մասնագիտական կրթություն՝ Քույրական գործ, մանկաբարձական գործ, դեղագործություն, ատամանտեխնիկական գործ և բուժական կոսմետոլոգիա բաժիններում: Կրթական ծրագիրը հաստատված է կրթության նախարարության կողմից»:

Սարգիս Քալաշյան

Տիկնիկագործությունը՝ ազգանվեր գործ

Մայիսի 25-ին մեծ շուքով նշվեցին մանկագիր Մարտուհի Սարգսյանի ծննդյան 60 և ստեղծագործական գործունեության 40-ամյակները: Այս տոնի կապակցությամբ Սուրբ Գր. Նարեկացի եկեղեցու հանդիսությունների սրահում ցուցադրվեցին բանաստեղծուհու պատրաստած տիկնիկները:

Երբ մտանք հյուրասրահ, մեր առջև բացվեց մի չքնաղ տեսարան. մեր առջև էր Արարատ լեռան գեղեցիկ պատկերը և նրա լանջերին կանգնած խրոխտ հայկական տարազի մոտ 100 տեսակ տիկնիկներ՝ մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից չքնաղ:

Միջոցառման ընթացքում ելույթ ունեցան «Օրրան» և «Թռիչք» հասարակական կազմակերպությունների սաները, «Հորովել» երգի, պարի պետական համույթի մեներգիչներ և Վանաձորի թիվ 6 դպրոցի 2-րդ դասարանի երեխաներ, որոնք ներկայացրին բանաստեղծուհու ստեղծագործությունները: Երեկոյին ներկա էին նաև ժողովրդական դերասանուհի Ռոզա Մխիթարյանը, ասմունքող Ջիվան Սարգսյանը: Ներկաներն իրենց շնորհավորանքներն ու ողջույնները հղեցին մանկագրին: Ներկա էր նաև Մարտուհի Սարգսյանի «Հայրենի օրրան» գրքի խմբագիր, երգիծաբան Սամվել Խալաթյանը, ով նշեց, որ տիկնիկները պատրաստված էին բարձր ճաշակով, ազգային ընկալմամբ: Համատեղությամբ կայացավ նաև հայ գրական կերպարների խամաճիկների ցուցադրույթ և նշվեց «Հայրենի օրրան» գրքի շնորհանդեսը: Գիրքը նվիրված է Ղարաքիլիսայի հերոսամարտի 73-ամյակին: Միջոցառման ավարտին բոլորը բարձր տպավորությամբ և գոհունակությամբ հեռացան դահլիճից:

Անուշ Սաքանյան

Աղբը գրավում է քաղաքը: Մաշտոց փողոցը շարունակում է աղտոտված մնալ:

Կնունյանց 2 շենքի հարևանությամբ կա մի խաչմերուկ: Նախկինում խաչմերուկի տարածքում կազմակերպվում էին բակային ճամբարներ: Այնուհետ երեխաները այն դարձրին ֆուտբոլի դաշտ: Տղաները որոշ ժամանակ տարածքում ֆուտբոլ խաղալուց հետո, ֆուտբոլի դաշտն էլ քանդեցին: Տարածքը աղտոտվեց, ամեն մի անցորդ իր ձեռքի աղբը գցում էր այդտեղ: Որոշ ժամանակ անց շենքի բնակիչներից մեկը՝ Լիզա Տատիկը, տարածքից վերցնելով որոշ մաս, մաքրեց, մշակեց և այն դարձրեց իր հողամասը, այժմ այնտեղ աճում են բանջարեղեններ, գեղեցիկ ծաղիկներ: Մյուս մասն այդպես էլ մնաց աղբանոց... Նշված տարածքը հարակից է նաև Վանաձորի թիվ ինը մանկապարտեզին: Գեղեցիկ խաչմերուկի հարևանությամբ Կնունյանց փողոցն ավելի ու ավելի է նմանվում քաղաքային աղբանոցի: Փողոցի աղտոտվածության և թափառող շների խնդիրը անհանգստացնում է նաև մանկապարտեզի դաստիարակներին և մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողներին: Նրանք դժգոհում են աղբի կույտի անտանելի հոտից: Երբեմն էլ Վանաձորի Անուշ Մաթևոսյանի անվան ութերորդ դպրոց կամ թիվ ինը մանկապարտեզ հաճախող երեխաները թափառող շների պատճառով վախով են անցնում Կնունյանց փողոցով:

Իսկ թափառող շները հետևողականորեն տարածում են աղբը...

Թեմայի վերաբերյալ մենք զրուցեցինք թաղամասի բնակիչ Լիզա տատիկի հետ:

Ինչու՞ եք այստեղ հողատարածք կառուցել:

- Մինչ ես դարձրի մշակովի հողամաս, շատ չարչարվեցի, դրանից առաջ տարածքը լի էր աղբով և քարերով: Ամռանը ամբողջ տարածքով մեկ տարբեր միջատներ էին բզզում և գալիս տուն մտնում: Երեկոյան էլ տունը լցվում էր անտանելի հոտով: Ես այս տարածքը մշակում եմ ու չեմ թողնում որ մի երեխա դպրոցից վերադառնալիս անգամ թուղթ գցի տարածքում: Ես պարտավոր չեմ տանջվելով այսքան բան անել, չէ՞ որ ծեր եմ, բայց անում եմ այս ամենը միայն իմ երկրի և բնության համար:

2. Շա՞տ են արդյոք թափառող շները տարածքում:

- Թափառող շների տերերը ամբողջ օրը պահում են նրանց, բայց երեկոյան, երբ կերակրելու պահն է գալիս, նրանք շներին բաց են թողնում, որպեսզի գան և աղբի կույտից ուտելիք գտնեն: Եվ այդպես ամբողջ աղբը տարածվում է փողոցում:

3. Եղե՞լ են այնպիսի դեպքեր, որ շները վնասեն անցորդներին:

- Շատ են եղել, օրինակ՝ մի քանի օր առաջ դպրոցից մի ծնող էր գալիս: Աղբի կողմով անցնելիս նրա վրա հարձակվեց մի շուն, և վնասեց կնոջը: Ճիշտ է՝ շատ չէր վնասվել, բայց կարող էր ավելի վատ էլ լինել:

Խնդրի վերաբերյալ զրուցեցինք նաև Կնունյանց 2 շենքի բնակիչ Ալվինա Դավթյանի հետ:

1. Ի՞նչու է այստեղ հաճախակի աղբի կույտ առաջանում:

- Ես կարող եմ ասել միայն այն, որ աշխատողները ժամանակին աղբը չեն տանում:

2. Ի՞նչ է անհրաժեշտ անել:

- Առաջինը՝ անհրաժեշտ է, որ աղբարկղը տեղափոխվի, բնակավայրից հեռու լինի: Երկրորդը՝ աշխատողները պետք է լինեն կարգապահ, և երրորդ՝ մարդիկ աղբը թափեն արկղի մեջ, այլ ոչ թե աղբամանի հարևանությամբ:

Կա ևս մեկ խնդիր, որը մեզ մտահոգում է: Հորդառատ անձրևի ժամանակ ամբողջ փողոցի անձրևաջուրը հավաքվում է մի ծեր բնակչի տան առջև: Ամեն անգամ փողոցի այդ կողմով անցնելիս մենք նկատում ենք, թե ինչպես է այդ ծեր մարդը դժվարությամբ մաքրում անձրևաջուրը:

Լիանա Դավթյան
Ազգանուշ Զաքարյան

Ձենք է վերցրել, բայց գրիչը ցած չի դրել

«Աղդամի մատույցներում էինք, գիշերը ծերունիներով (այդպես էինք անվանում ընդամենը երեսունն անց զինվորներիս՝ 18-20 տարեկանների համեմատությամբ) մնացինք դիրքերում՝ հնարավոր հարձակումից պաշտպանվելու համար, առավոտյան, երբ արդեն պարզ էր, որ հարձակում չի սպասվում, դիրքերը զիջեցինք երիտասարդներին և գնացինք մի փոքր հանգստանալու: Դեռ արթմնի քնի մեջ լսեցի Գագիկ Սարիբեկյանին (նա զոհվեց), ասում էր ինչ-որ կարևոր բան է ցույց տալու, պետք է իրեն հետևեմ»,- և Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս, ազատամարտիկ և բանաստեղծ Գևորգ Չատինյանը տեսավ ամենագեղեցիկ բնանկարը իր կյանքում՝ լեռների բարձունքից ցած սահող ու պատառոտվող մշուշները, ու մշուշների կարկատանից թափանցող ալ կարմիր կակաչները: Հանեց զինվորական սաղավարտը, թուղթը դրեց վրան և գրեց... բանաստեղծությունն էլ կոչվեց «Ծեր կարապների հոգնած վեհությամբ», կոչվեց, և ապա սպասեց, շատ երկար սպասեց, 1993թ-ից մինչև 2010թ-ն սպասեց իր ծննդյան ևս մեկ օրվան, որ պատմի հայ ազատամարտիկի ոչ միայն բռունցքի ուժի, այլ նաև գրչի սրության մասին, այլ նաև հայրենի հողի բնապաշտը լինելու մասին: Իսկ մինչ այդ Գևորգ Չատինյանը շարունակեց պայքարը Հայ Հեղափոխական Դաշնակցության «Կամավորական Լոռի» ջոկատի կազմում՝ կռվելով Հադրութում, Աղդամում՝ հասնելով մինչև Օմարի լեռներ: Հետո՝ 2008թ-ին ԼՂՀ Նախագահի թիվ 55 հրամանագրով պարգևատրվեց «Մարտական ծառայություն» մեդալով: Գևորգ Չատինյանի բանաստեղծությունները բազմիցս են տպագրվել մամուլում և դրական արձագանք գտել ՀՀ գրողների միության Լոռու մարզային բաժանմունքի բանաստեղծների կարծիքների փոխանակության ժամանակ: Այսպիսի քննարկման ժամանակ էլ բաժանմունքի նախագահ Մանվել Միկոյանի և բանաստեղծ, թարգմանիչ Խորեն Գասպարյանի առաջարկով և Չատինյան բանաստեղծի լավագույն ընկերոջ՝ Հովհաննես Մխոյանի հովանավորությամբ լույս տեսավ «Անժամկետ արձակուրդ» գիրքը՝ Վանաձորի Սիմ տպագրատանը՝ 500 օրինակով: Գրքի նախաձեռնողների ջանքերով էլ ՀՀ գրողների միության Լոռու մարզային բաժանմունքում կայացավ շնորհանդեսը: Բ.Գ.Թ., ՎՊՄԻ-ի գրականության ամբիոնի դոցենտ Գայանե Մամուլյանը շնորհավորական խոսքում նշեց.«Գրքի կազմն արդեն իսկ խոսուն է: Ակնբախ է երկփեղկվածությունը. երկնային անաղարտ կապույտի մեջ ձերմակ տառերը՝ մաքրություն ու պայծառություն, իսկ ցածում՝ նույն բառերի սևատառ դաջված հայելագիրը կյանքի՝ անակնկալներով լի ճանապարհին: Գուցե կարելի է այլ կերպ մեկնաբանել, բայց գիրքն ընթերցելուց հետո իմ կարծիքը ոչ միայն չփոխվեց, այլև հաստատվեց»: Գիրքը ենթավերնագրված է «Ինքնասպանությունից հետո». բանաստեղծը կատակով նշում է.«Անձը կարող է մի քանի անգամ իր կյանքում ինքնասպանվել և վերածնվել՝ ոչ պարտադիր ֆիզիկական առումով»: Գրքում զետեղված են բանաստեղծի թվով 100 գործեր, որոնք գրքի խմբագիր Մանվել Միկոյանի կարծիքով աֆորիստիկ-խոհական բանաստեղծություններ են, քիչ են սյուժետային գործերը, առավել է փիլիսոփայական մտածողությունը: Բանաստեղծ-թարգմանիչ Խորեն Գասպարյանը շնորհավորական խոսքում նշեց.«Գևորգ Չատինյանը ազնվության գոյամարտի ազատամարտիկ է, հենց այդ պատճառով էլ գնաց ճակատ, դրա համար որպես մանկավարժ-պատմաբան կրթեց ուսանող սերունդների, և իր բանաստեղծություններում նույն ազնվության հաղթանակի համար պայքարեց»:

Հերմինե Օհանյան
«Թռիչք» ՀԿ հանրային կապերի պատասխանատու, «Պատանի լրագրող» խմբակի ղեկավար

«Թռիչք» ՀԿ-ն հյուրընկալեց Վանաձորի «Օրհուս» կենտրոնի համակարգող Պերճ Բոջուկյանին

1972թ-ի դեկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի 27-րդ նստաշրջանին Ստոկհոլմյան հանձնաժողովը հունիսի 5-ը ընդունեց որպես շրջակա միջավայրի համաշխարհային օր: Օրվա խորհրդին հավատարիմ հունիսի հինգին Վանաձորում գործող «Թռիչք» կրթամշակութային և խորհրդատվական ՀԿ գրասենյակում կայացավ կազմակերպության երիտասարդական թևի, «Պատանի լրագրող» խմբակի անդամների և Վանաձորի «Օրհուս» կենտրոնի համակարգող Պերճ Բոջուկյանի հանդիպումը:

ՀՀ-ում գործում են 14 «Օրհուս» կենտրոններ, Լոռու մարզում գործում են Վանաձոր, Ալավերդի և Ստեփանավան քաղաքներում: Վանաձորի «Օրհուս» կենտրոնի համակարգող Պերճ Բոջուկյանի հետ հանդիպման նպատակն էր ծանոթանալ բնական ռեսուրսների խնայողությանը, և մասնավորապես, անդրադառնալ Լոռու մարզում առկա բնապահպանական խնդիրներին: Պերճ Բոջուկյանը երիտասարդներին ներկայացրեց էլեկտրաէներգիայի ստացման ճանապարհները, այնուհետ խոհանոցային տեխնիկայի ճիշտ գործածման օրինակի վրա ցուցադրեց, թե ինչպես պետք է կատարվի էլեկտրաէներգիայի խնայողություն: Անդրադարձ եղավ նաև Վանաձոր քաղաքի երեք գետերի մաքրման խնդիրներին: Պերճ Բոջուկյանը նշեց, որ գետերը չէին աղտոտվի, եթե բնակչությունը տոպրակներով աղբը չնետեր գետերի մեջ և տեղեկացրեց, որ Վանաձորի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժինը՝ ամեն տարի գարնանը մաքրում է գետերի հուները:

Պատանի լրագրողները հետաքրքրվեցին Վանաձորում՝ օդի աղտոտվածության և ծառահատման խնդիրներով: Պերճ Բոջուկյանը ներկայացրեց նաև արդունաբերական թափոնների ոչնչացման մեթոդները, անդրադարձավ աղբաթափման հարցերին:

Սարգիս Քալաշյան

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԹՌԻՉՔ

Կրտսեր հայորդաց խմբակի երեխաներն արշավի ժամանակ

Փոքրիկ տղան

Մի անգամ մի փոքրիկ տղա մոլորվել էր և չէր կարողանում գտնել իրենց տունը: Ես նրան հրավիրեցի մեր տուն: Արդեն շատ ուշ էր: Նա անընդհատ լաց էր լինում և իր մայրիկին էր ուզում: Ես ու քույրիկս հանգստացրինք փոքրիկին: Նախ հյուրասիրեցինք մայրիկիս պատրաստած համեղ կերակուրներով, հետո նրան տվեցինք մեր բոլոր խաղալիքները և խաղացինք հետը: Հետո ես կարդացի հեքիաթ, իսկ նա այնքան հոգնած էր, որ անմիջապես քնեց:

Երբ մայրիկս տուն եկավ, մենք նրան պատմեցինք ամեն ինչ: Մայրիկս մեզ ասաց.

_ Ապրեք, շատ լավ եք արել, բայց հիմա նրա մայրիկը փնտրում է իր երեխային, պետք է հայտնել ոստիկանություն:

Երբ ոստիկաններն եկան տանելու, փոքրիկ տղան չէր ուզում գնալ: Նա իր մայրիկին ասում էր, որ մեր տանն իրեն շատ լավ է զգում:

Նրանք մեզ իրենց խորին շնորհակալությունն հայտնեցին ու գնացին:

Ամեն անգամ հիշելով այս դեպքը ես ինձ երջանիկ եմ զգում, որովհետև բարի գործ եմ կատարել: Այս դեպքը իմ տարիների ամենաքաղցր ու բարի հուշն է, ու մնացել է իմ մեջ: Չնայած, որ էլի շատ քաղցր հուշեր ունեմ:

Մերի Բեկչյան, 13 տարեկան,
Կրտսեր հայորդաց խմբակ

Թիթեռնիկը

Դաշտ ու անտառ, սար ու ձոր ողողվեցին արևի ոսկեգօծ շողերով: Լսվեցին թռչունների վաղորդյան ձովողյունը: Մեղմօրոր քամու շոյանքից թիթեռնիկն արթնացավ: Մեկ օրվա կյանք ուներ, պետք է շտապեր: Ծաղիկներով լի դաշտը կանչում էր նրան :

Հանապազօրյա հոգսերով տարված՝ մարդիկ չնկատեցին թիթեռնիկին: Միայն կապուտաչյա մանուշակները մեղմ ժպտացին գեղեցկուհուն:

Տոթ կեսօրին թիթեռնիկը հասավ սառնորակ աղբյուրին: Երազանքով նայեց ջինջ երկնքում թևածող ծիծեռնակին:

Երեկո էր: Սառը քամին քշեց նրան: Թիթեռն անզոր թևերով դիմադրեց, բայց անօգուտ: Տարօրինակ և անսովոր դող զգաց....

Շատ հաճախ ապրելով մեր հոգսերով ու գործերով տարված, չենք էլ նկատում մեզ շրջապատող գեղեցկությունը՝ մնալով անտեղյակ ու անհաղորդ...

Սիրենք, նկատենք ու գնահատենք գեղեցիկը, քանի որ այն կփրկի աշխարհը...

Նարե Հարությունյան, 11 տարեկան,
Կրտսեր հայորդաց խմբակ

ԵՍ ՔԵԶ ՍԻՐՈՒՄ ԵՄ

Քեզ ունենալու կամ չունունալու
ցավին արդեն չեմ դիմանում
Կարոտից հոգիս մաշվում է,
վառվում...
ՈՒզում եմ նորից քո գրկում
լինել,
Նորից հանդիպել, նորից քեզ
փարվել
Նորից համբուրվել, նորից
խենթանալ...
Նորից քեզ սիրել ու չհեռանալ...
Գլուխդ նորից դնես ծնկներիս,
Նայես աչքերիս, հայացքով
այրես,
Կարոտից հոգիս մենակ է ու
խեղճ.
ԵՍ ՔԵԶ ՍԻՐՈՒՄ ԵՄ՝
Սիրում եմ անվերջ...

Ես քեզ հետ եմ

Եթե հանկարծ հոգիդ տխրի ,
Իսկ աչքերդ լուռ արտասվեն ,
Թե ժպիտդ անգամ սառչի ,
Իսկ խոսքերը արդեն չօգնեն ,
Եթե Աստված երես թեքի ,
Ու աղոթքդ քո չլսի...
Ես քեզ հետ եմ,
Ամեն վայրկյան,
Միշտ քո կողքին,
Միշտ պահապան,
Անգամ եթե ես մահանամ:

Սերը չի մեռնում.
Նա միշտ ապրում է:
Սերը պայքար է
Ու միշտ հաղթում է:
Սերը տանջանք է,
Բայց միևնույնն է՝
Սերը դա կյանք է...

Վաչիկ Մատինյան

Հեքիաթ շան ու կատվի մասին

Մի բակում կողք կողքի ապրում էին շունն ու կատուն: Նրանք ինչպես մյուս շներն ու կատուները, իրար չէին սիրում: Շունը տեսնելով կատվին միշտ գոռոում էր: Իսկ կատուն աշխատում էր իրեն հեռու պահել:

Օրերից մի օր շունը փրկեց կատվին. երբ բակի չարաճճի տղաները բռնել էին նրան և ուզում էին պարանով կապել: Հենց այդ պահին շունը հասավ ու ազատեց կատվին: Դարերից եկած թշնամանքը փոխվեց մեծ բարեկամության:

Հասմիկ Մուկուչյան, 11 տարեկան,
Կրտսեր հայորդաց խումբ

Ճնճղուկների զրույցը

Աշնանային ցուրտ օր է: Երկու ճնճղուկներ ծառին նստած խոսում էին, թե ինչ պետք է անեն, որ սովից չմեռնեն ու չցրտահարվեն:

Ճնճղուկ, լսիր քեզ ինչ եմ ասում, ասաց նրանցից մեկը, _ մոտակայքում մի բույն եմ տեսել, որ պատրաստել են երեխաները, արի պատսպարվենք այնտեղ:

Ոչ ես ինքս էլ կարող եմ մեզ համար բույն պատրաստել, ասաց հպարտ ճնճղուկը ու սկսեց այս ու այն կողմ նայել:

Բայց ոչ միայն ձյուղեր չկան, այլ նաև մենք ուտելու ոչինչ չունենք, խեղ ճացած ասաց առաջին ճնճղուկը:

Անցնում էին օրեր, բայց հպարտ ճնճղուկը ոչինչ չէր անում: Երբ տեղաց առաջին ձյունն ու շուրջը ծածկվեց ձյան սպիտակ սավանով՝ ճնճղուկները քիչ էր մնում ցրտահարվեին:

Լսիր ճնճղուկ, դու հիշում ես այն բնի տեղը, որ երեխաներն էին պատրաստել, եկ պատսպարվենք այնտեղ մինչև գարուն:

Ճիշտ ես ասում, միգուցե մեզ հենց այդ երեխաներն էլ խղճան ու կերակրեն, ու բախացած պատասխանեց մյուսը:

Ուրիշ ճար չունենք, պիտի այնտեղ ձմեռենք, գլխիկոր ասաց հպարտ ճնճղուկն, ու նրանք թռան դեպի փրկության բույն՝ մի կողմ դնելով անիմաստ հպարտությունն ու մեծամտությունը:

Նանե Բեգլարյան, 10 տարեկան,
կրտսեր Հայորդաց խմբակ

«Խաղահրապարակի փոխարեն ավտոմեքենաներ»

Գաղտնիք չէ, որ Վանաձորի մի շարք շենքերի բակերում երեխաների խաղի համար նախատեսված վայրերը զբաղեցնում են ավտոմեքենաները...

Նախկինում Հաղթանակի՝ ներկայումս Նաիրի 3 շենքի բակը բավականին ընդարձակ է, սակայն բազմաթիվ են նաև այնտեղ կայանող մեքենաները: Շենքում մեծաթիվ երեխաներ են բնակվում, ովքեր տարիներ շարունակ միայն երազում են ունենալ խաղահրապարակ, սակայն այդպես էլ երազանքը չի կատարվում: Քաղաքապետարանն այդ ուղղությամբ չի ձեռնարկում և ոչ մի քայլ: Տասնհինգ տարեկան Դիանա Ազարյանն ասում է, որ մեքենաների կայանումը խանգարում է իրենց խաղերին, ինչ-որ բան խաղալիս անընդհատ լարված են, որ հանկարծ մի մեքենայի չդիպչեն...

Ի դեպ, բակը գտնվում է անմխիթար վիճակում, շատ են փոսերը և մի անրձրևև անգամ հերիք է այդ փոսերը մի քանի օր ջրով լցված դարձնելու համար: Տասներկու տարեկան Արտակն ասում է, որ երբ ֆուտբոլ խաղալիս գնդակը պատահմամբ դիպչում է մեքենաներից մեկին, անպայման նրա տերը սկանդալ է սարքում: Բա երեխաներն ի՞նչ անեն...

Թե ինչ կարծիքի է բակի մեքենաների վերաբերյալ հարցին, Նաիրի 3 շենքի բնակչուհի տիկին Մարինեն ասաց. «Մեքենաները խանգարում են երեխաներին, ինձ էլ անհանգստացնում են: Չեմ կարող հանգիստ գործ անել, վախենում եմ երեխաների համար»:

Բակը վերանորոգելու համար շատ բան պետք չէ, ուղղակի մի քանի նստարան, լուսավորում, մեքենա չկայանելու նշաններ ու մի քանի կարուսել: Հա, մոռացա նշել. այդ ամենը՝ առանց ջրափոսերի:

Սևակ Համբարյան

Երաժշտությունը մտածել չի կարող, բայց նա կարող է մարմնավորել միտքը:
Վագներ

Տղամարդիկ ուշադրություն են դարձնում այն բանին, թե ինչ են մտածում իրենց մասին, կանանց համար կարևոր է, թե իրենց մասին ինչ են խոսում: Մարդկության մեծ մասը ողջերը չեն, այլ մեռածները:
Կանտ

Երջանիկ է ոչ թե նա, ով գերի է սառը բանականությանը, այլ նա, ով ազատություն է տալիս հոգում թևածող խենթ երազանքներին: Երջանիկ է նա, ով կարող է կապի մեջ դնել իր կյանքի սկիզբը վերջի հետ:
Գյոթե

Միայն նա է իսկական աղքատը, ով ո՛չ խելք ունի, ո՛չ ուժ:
Բենել Շտեռնաու

Միայն մարդկանց մեջ է մարդն ընդունակ ճանաչել իրեն:
Գյոթե

«Օրրան»

12-ամյա Արման Գալոյանը առավոտյան արթնանում է վաղ և գնում դպրոց: Ժամը երկուսին գալիս է «Օրրան» բարեգործական ՀԿ Վանաձորի մասնաճյուղ: Հաց է ուտում ու սկսվում են դասերը: Մինչև ժամը տասնութը մանավարժների օգնությամբ սովորում է դասերը, կատարում տնային հանձնարարությունները: Հինգշաբթի և ուրբաթ օրերին սովորում է փայտամշակում: Օրվա ավարտին ստանում է տուն հասնելու համար հատկացված ուղեվարձը ու շտապում տուն: «Օրրան» բարեգործական ՀԿ է հաճախում 11 տարեկանից:

«Օրրան»-ի Վանաձորյան մասնաճյուղը հիմնադրվել է 2009թ. աշնանը: Կազմակերպության մանկավարժ Գայանե Մանուչարյանի հետ զրույցի ընթացքում պարզեցինք, որ ՀԿ-ն ունի 56 շահառու երեխա, ովքեր գալիս են «Օրրան» սոցիալապես անապահով ընտանիքներից: Կան նաև միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաներ: Երեխաների առօրյայի մասին իմացանք, որ ժամը տասնչորսին հաց են ուտում, զբաղվում են դասերով: Կան նաև փայտի մշակման և կավագործության խմբակներ: Երեխաները հաճախ մասնակցում են միջոցառումների, համերգների, թատրոն են այցելում, կամ իրենք են կազմակերպում տարբեր միջոցառումներ:

15-ամյա Աննա Վարոսյանը դպրոցում լավ է սովորում: Արդեն մեկ տարի է «Օրրան»-ի շահառու է: Նա ասաց, որ իր առօրյան այստեղ շատ լավ է անցնում:

Չնայած «Օրրան»-ի երեխաները հունիսի 1-ին Վանաձորի Սայաթ-Նովայի անվան այգում կազմակերպած միջոցառմանը իրենց ունեցած ելույներից գոհ չմնացին, բայց կարողացան իրականացնել փորագրված փայտերից ու կավե ամաններից ցուցահանդես-վաճառք՝ ամբողջ հասույթը տրամադրելով կենտրոնին: Տոնական օրվա ավարտին էլ ստացան նվերներ:

«Օրրան»-ի շահառուների մեջ կան նաև նախադպրոցական տարիքի երեխաներ: Նրանց խմբի մանկավարժն է Նելլի Ղարագյոզյանը, ով նշեց, որ երեխաները տարբեր են իրենց հոգեկան խառնվածքով, կան նաև ընտանեկան և դպրոցական միջավայրում խնդիրներ ունեցող, դյուրաբորբոք երեխաներ, որոնք պահանջում են ավելի մեծ ուշադրություն և խնամք:

Սևակ Համբարյան

Հրատարակիչ՝ «Թռիչք» հասարակական կազմակերպություն, **«ԹՌԻՉՔ»** թերթի խմբագրություն
Հասցե՝ Թատերական 6, հեռ.՝ 2-45-07
Գլխավոր խմբագիր՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**
Խմբագիր՝ Հերմինե Օհանյան

Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ **300** օրինակ
Համակարգչային ձեւավորումը՝
Արմեն Օսիպովի

Տպագրության որակի համար
պատասխանատու է տպարանը:
Թերթը տպագրվել է՝ **«ՍԻՄ տպագրատուն»** ՍՊԸ-ում
ք. Վանաձոր, Շիրակացի 4ա, հեռ.՝ 4-03-29